

ՇԱՀԱՆ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ
ԱՆՁԸ ԵՆ ԳՈՐԾԸ

արտագրեց՝ Ս.Մ.
1969

ՇԱՀԱՆ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ
ԱՆՁԸ ԵՆ ԳՈՐԾԸ

արտագրեց՝ Ս.Ս.
1969

Մեծ Կորուստը

Ոչ եւս՝ Կոմիտաս Վարդապետը: Ահա՛ որ, բանաստեղծին բառերով, "ինչպէս որ ինքն ըստ ինքեան՝ Յաւիտենութիւնը, վերջապէս, զայն կը փոխէ" (1): Հոնսկ ուրեմն մահը եկաւ եւ իր ախտէն՝ որ զինքը տարիներէ ի վեր այլակերպած էր, զինքն իր հանձարէն բաժնելով ու իբր քայքանջատ էութիւն շարունակելով պահել սակայն մեր խեղճ եւ անգոր կարեկցութեան աչքերուն դիմաց, մահը եկաւ ազատելու զինքը եւ վերահաստատելու վերջնապէս իր իրաւ Անձին սքանչելի միութեանը մէջ:

Հիմա կրնանք կանգ առնել իր առջեւ: Կանգ առնել, ինչպէս յաճախ պէտք է ընենք, ~~և~~ ու խեղճօրէն մարդկային նկատմունքներէն վեր ու ազատ՝ դիտել զինքը գուտ հոգեկան իր դիմագծին մէջ, այնպէս ինչպէս իր մահուամբ Յաւիտենութիւնը այլեւս կ'ընդունի զինքն իր մէջ:

Ծանչցայ զինքը, ներուի ինձ հոս այս անձնական յիշատակը. եթէ զայն կուտամ անոր համար է որ կը թուի ինձ թէ անիկա յատկանշական է ընդհանուր տեսակէտով մըն ալ—զինքը ծանչցայ 1910ի միջոցներուն, Բարիզ՝ ուր ուսանող մըն էի հագիւ երիտասարդ: Այն ատենները Բարիզը կ'ապրէր գեղարուեստական իր ամենէն կենսալիւր շրջաններէն մէկը: Կիրակօրեայ մեծ համանուագային հանդէսները եւ թատերական ու ~~բարեգաւտ~~ ^{բարեգաւտ} Կարային ներկայացումները անհունօրէն խանդավառ մթնոլորտի մը մէջ կը բերէին խոնելու, երբեմն իրարու դէմ նետելու, երաժշտութեան էն հուժկու ու մոգական հոսանքները. մէկ կողմէն դեռ միշտ աշխարհակալ՝ տիտանեան հզօրութիւնը Վակներեան համանուագին, բայց միւս կողմէ ուրիշ անդիմադրելի հմայքով մը արդէն յայտնուող ու ինքնազրուաւող թովչութիւնը Տէպիւսիի եւ ֆրանսացի միւս նոր վարպետներու երաժշտութեան, ու դարձեալ Ռուսերուն բերած ձայներու, ձեւերո՞ւ ու գոյներու տարաշխարհին միեւնոյն ատեն բարբարիկ ու գերազանցօրէն նուրբ արուեստին ամբողջ նորահրաշ թարմութիւնը—Տիակիլէֆեան "էսթեղիք"ին երջանկագոյն օրերն էին:

Փիլիսոփայութեան ուսանող էի, բայց արուեստի կրօնին նորընծայի մը անհուն խանդովը տարուած էի գեղեցկութեան այդ բոլոր անդիմադրելի դիւթանքներէն:

Ինչ էր այն ատեն ինձ համար իմ ցեղիս երաժշտութիւնը: Ինչպէ՞ս կ'արժեւորէի զայն երաժշտական խղճմտանքիս մէջ.—իբրեւ աւելի բան արհամարհելի քանակութիւն մը:

(1) "Tel qu'en lui-même ^{en fin,} l'éternité le change." (~~Paradoxe~~)
Մալամէ՛ Էտկառ Բօէյի մահուան առթիւ:

Պոլիս՝ ուրկէ եկեր էի, իբր հայ երաժշտութիւն՝ լսեր էի նախ երգեցողութիւնը մեր երջանիկ տիրացուներուն: Ինչ կար անոնց մէջ որ կարենար գրաւել զիս, արդէն հոն իսկ Պէթհովէնով, Շուլմանով ու Շօքէնով կազմուած իմ ճաշակիս մէջ: Թերեւս անոնց տակը, աղօտ կերպով, խորունկ բան մը կ'ընէր զգալի. բայց այդ բանը անյայտ կը մնար ինծի յաւէտ, այդ ^{բայց} ~~իսկ~~ ^{բայց} աղաղակող դպիրներու ձայներուն անկարգութեան մէջ ու մենեզող վարպետներուն բոլոր մեղկ քաշքշուքներուն, կոյկոյներուն ու արեւելեան փուճ գարդոլորումներուն տակ: Ազգային եղանակները՝ "Արիք Հայկագունք"ի տեսակէն. չէր արժեր անոնց խօսքն իսկ ընել. հայ բառերու վրայ եւրոպական էն ծածած տեսակի երաժշտութիւն էին անոնք, ընդհանրապէս, մեր տիրացուներուն եւրոպական երգերէն ըմբոնած միակ կշռոյթին, քայլերգի կշռոյթին վրայ յառաջացող, ծերացած, թուլցած ընթացքով մը: Այսպէս, իբրեւ հայ չէի խորհիւր անգամ հայ իրաւ երաժշտութեան մը գոյութեանը՝ ո՛ւր մնաց համարձակիլ անոր կարելիութիւններուն եւ իրաւունքներուն անդրադառնալու:

Այս պայմաններուն մէջ էր որ, իրիկունիք, հրաւէր մը ստացայ Օր. Մարգարիտ Բաբայեանէն իր բնակարանը գտնուելու, հոն "Հայաստանէն եկած հայ երաժշտութեան վարպետ՝ Կոմիտաս Վարդապետը ծանչնալու համար": Թերահաւատ՝ զացի:

Եկաւ Վարդապետը: Գեղեցիկ չէր: Նոյնիսկ պիտի ըսեմ հակառակը՝ իր սեւ երկայն ուղեկոթին բոնագրօսիկ պաշտօնականութեանը մէջ: Իր ոսկրուտ դէմքով ինծի կը յիշեցնէր Սոկրատի ինչ ինչ դիմաքանդակները:

Պահ մը վերջը սակայն երբ տրուեցաւ ինծի լսել իր մատներուն տակ յառնող առաջին ներդաշնակութիւնները դաշնամուրին ու մանաւանդ իր արձակած առաջին երկարածիզ կանչերը մեր ամենի ու բաղքը լեռներէն կարծես փրթած՝ խորհեցայ վերստին Սոկրատին, բայց այս անգամ Պղատոնի այն էջին վերյիշումով ուր Պղատոն զայն կը նմանցնէ Աթենացի քանդակագործներու աշխատանոցներուն մէջ տեսնըւող այն խոշոր տգեղ ու տարօրինակ "սիլէն"ներու քանդակներուն՝ որոնք պահոցներ են սակայն, կ'ըսէ, որ երբ բացուին աստուածներու վեհօրէն գեղեցիկ արձանիկներ յայտ կը բերեն:

Այս մարդը, խորհեցայ, Սոկրատին պէս աստուածային ոգիին իջեւան մըն էր իր այդ կերպարանքին ետեւ:

Վարդապետը նուազեց ու երգեց: Ժամ մը կամ աւելի տուաւ ինքզինքը, ինչպէս գիտեր ընել այդ, բոպէի մը մէջ անգամ, այսինքն ամբողջովին: Ու պատահեցաւ իմ մէջս, այն զիշեր, մին հոգիի կեանքին էն տարօրինակ երեւոյթներէն որ յայտնատեսութեան մը լոյսին տակ կատարուած "դարձը" կը կոչուի: Հայ երաժշտութիւն մը, երաժշտութեան ամենահարազատ տեսակէն, կը յայտնուէր մէկէն ինծի, հեռաւոր, խորունկ, ցեղային ալքերուս մէջ արձագանգներ արթնցնելով: Նոր—ու այնքան հին—իսկութիւն մը՝ որ կը փոխէր երաժշտական էութիւնս, զայն կը շրջէր կարծես: Վարդապետին արուեստագիտական Անձին մէջէն, մէկէն, դէմյանդիման կը

գտնէի ինքզինքս ամբողջ երաժշտական հայրենաշխարհի մը որուն հպարտ էի ես ալ հեռաւոր կերպով զաւակը եղած ըլլալու: Կը զգայի հիմա որ ցեղս ունեցեր է "իր երգը" որ արժանի էր հնչելու ուրիշ մեծ ժողովուրդներու բարձրագոյն ստեղծագործութիւններու համերգին մէջ, դեռ եւս համեստ՝ գործերու գիծերուն արտաքին մեծութեամբը, բայց գեղեցկութեան էն իրաւ որակէն շինուած:—Հայ երաժշտութեան համար Սողոսի մը պէս մտեր էի այդ բնակարանը, այն իրիկուն, ու Վարդապետը զիս կը դրկէր ետ, իր առաքեալի էութեամբը ինծի դպած՝ իբր Պօղոս մը ըրած ինծմէ:

Անկէ վերջ իր հետեւողն էի այլ եւս, հայ երաժիշտ հոգիի մը համար չէր կարելի զինքը ծանչնալ ու չըլլալ իր "աշակերտը":

Հիմա, իրմով համոզուած էի թէ Հայ երաժշտութեան համար կը պատահէր ու պէտք էր որ պատահեր ինչ որ աչքերուս դիմաց տեղի կ'ունենար, հոն՝ Բարիզի մէջ, ոուսականին համար. խորունկ ժողովուրդի մը երաժշտական ալքերէն ու բնագոյն ծնած էպէս ինքնօրինակ իսկութիւն մը բերել գեղեցկութեան, որ եւրոպական յառաջացեալ թէքնիքին միջոցաւ յայտնագործուած՝ կը մտնէր յաղթական՝ Մեծ Երաժշտութեան բարձրադիր կալուածներուն մէջ:

Կեանքը

Կը սորվէի Վարդապետին կեանքը: Տարօրինակ, բազմադէպ, ու պարզ միանգամայն, ներքին գիծին ուղիղութեամբը:

Կուտինայի մէջ ծնած՝ 1869ին երաժիշտ սերունդէ մը, կանուխէն կորսնցուցած իր ծնողքը, տասնեւմէկ տարեկանին կ'ընտրուի վիճակով, դրկուելու Էջմիածնին Գէորգեան ճեմարանը: Փոքրիկ Սողոմոնը իբր Զեօթահացի դժուարաւ կը խօսէր ~~այ~~ հայերէնը, բայց գիտէր ըսել արդէն բոլոր շարականները. ու երբ առաջին անգամ կաթողիկոսին՝ Գէորգ Դ.ի առջեւ կ'երգէ, արցունքներ՝ անդիմադրելի, կը հոսին ձերունի հայրապետին աչքերէն: Գէորգեան ճեմարանի ուսումներուն կը հետեւի եռանդով՝ քանի մը ամիսէն տիրանալով մայրենի լեզուին: Բայց շուտով իր բուն ծամբան կը գտնէ ու աշակերտութեան շրջանէն իսկ կը զրաւուի երաժշտական արուեստովը ու ժողովրդական երգերու խորունկ հմայքովը: Այն ատեն արեւելահայոց մէջ, հաւանաբար ոուսերու օրինակին ազդեցութեամբ, եւրոպական թէքնիքով հայ երգին մօտենալու ուղղութեան հիմերը դրուած էին արդէն: Ժողովրդական երգերուն համար այդ բանը փորձեր էր ընել տաղանդաւոր ու դժբախտ ԿարաՄուրզան, եւ եկեղեցականներուն համար մասնաւորաբար՝ Մ. Եկմալեանը: Ճեմարանի աշակերտ Սողոմոնը կը բռնէր նոյն ուղին: Տասնեւութը տարեկանին արդէն գեղջուկ երգեր կը ձայնագրէ ու քիչ ատեն վերջ եկեղեցական երաժշտութեան բազմաձայն երգեցողութեան համար Եկմալեանէ եւ անոր գործը պիտի ծանչնար: 1890ին սարկաւազ կը ձեռնադրուի, իսկ 1893ին աւարտելով ճեմարանի ամբողջական ընթացքը, արեղայական ուխտը կ'ընէ, կոչուելով Կոմիտաս, խանդագին ընտրելով իր պաշտած արուեստին հասնելու խորագոյն ուղին—հոգեւոր կեանքի ուղին:

1896ին Խրիմեան Հայրիկ, Մանթաշեանցի ծախքով զինքը կը դրկէ Պեոլին, իբր ուսանող պետական երաժշտանոցին: Երիտասարդ վարդապետը կ'աշակերտի նշանաւոր Եօսիիմի յանձնարարութեամբ մասնաւորաբար Շմիտի, որ կը բաջալերէ զինքը իր արդէն ընտրած ուղղութեանը մէջ, իր ցեղային քոյրի մշակութեան նուիրուելու: Կոմիտաս Վարդապետ կը հետեւի նաեւ Պեոլինի համալսարանին երաժշտագիտական ու փիլսոփայական դասընթացքներուն: Երեք տարիէն, 1899ին կ'աւարտէր իր ուսումը ու կը վերադառնար Էջմիածին:

Այն ատեն կը սկսի իրեն համար իր գործին ատաղձները հաւաքելու կարեւոր շրջանը: Ծեմարամին մէջ երաժշտութեան ուսուցիչ է եւ Ս. Էջմիածնի տաճարին դպրապետը: Խոլմը կը պատրաստէ եւ պատարագի ու ինչ ինչ շարականներու բազմաձայն երգեցողութիւնը կը մշակէ: Բայց ամառները արեւելեան Հայաստանի գանազան շրջանները կը պտտի, մեր հին ու նոր աշուղներուն հետքերուն վրայէն, այս անգամ իբր եւրոպական իմաստով մշակուած երաժիշտ: Գեղջուկներու կեանքին կը խառնուի, ու իր էն հարազատ ակէն կը խմէ, խորապէս երաժիշտ ժողովուրդի մը, որ հայ ժողովուրդն է, ստեղծած ու ապրած երաժշտութիւնը՝ զայն լաւագոյն կերպով ծանչնալու ու մշակելու համար: Միեւնոյն ատեն կը ծանչնար հարեւան ժողովուրդներու տոհմիկ երաժշտութիւնը, քիւրտերուն, Պարսիկներուն, Վրացիներուն: Այդ ամէնը պիտի ուսումնասիրէ, բաղդատէ ու պիտի գնահատէ յետոյ, երաժշտական գիտութեան ցուցմունքներովը: Ըլլայ եկեղեցական, ըլլայ աշխարհիկ հայ երգերու մեկնութեան ու դաշնաւորման աշխատութիւններու երկրորդ՝ բայց առաջինէն ~~աւել~~ այլապէս գիտակից շրջանն է այժմ Վարդապետին:

1904ին արդէն հասունցած էին իր արուեստին առաջին պտուղները: Ու կը սկսի իր առաքելութեան. հայ երաժշտական ինքնուրոյն գեղեցկութիւնը ծանցնելու, սիրցնելու, անով ազգային խորագոյն գիտակցութիւն արթնցնելու, ու անով դարձեալ, օտար յառաջացած ազգերու առջեւ հայ բարձրագոյն մշակոյթի մը մշմարտութիւնը յայտնաբերելու իր առաքելութեան:

Նախ Կովկասի մէջ, Էջմիածին, Երեւան, ^{Թիֆլիս, Բագու տրուած համերգներով, յետոյ} Կոլոր կու գայ վերստին 1906ին, ի Բարիզ, Պեոլին, Զուլիցերիոյ եւ Իտալիոյ գանազան քաղաքներուն մէջ սարքուած նուագահանդէսներով եւ դասախօսութիւններով: Այդ բոլորը ապշեցուցիչ յայտնութիւններ կը բերեն Եւրոպայի հասկցող հասարակութեան. ինչպէս Պեոլին եւ Բարիզ գումարուած միջազգային երաժշտական համաժողովներուն իր ըրած հաղորդագրութիւնները պիտի բերէին աւելի վերջը երաժշտութեան գիտուններուն:

1907ին վերադարձած է Էջմիածին: Կը շարունակէ իր գործը անոր բոլոր ուղղութիւններուն մէջ: Բայց արուեստագէտի իր դիւրազգաց հոգին դժուար կը տանի իր շրջապատէն իրեն պատճառուած ինչ ինչ դառնութիւններ որոնք ինքնին հասկրնալի են սակայն: 1909ին արցունքը աչքին կը բաժնուի Էջմիածինէն:

Կուլ գայ Պոլիս. ու ալլելու ժողովրդական խանդավառութեան ծովի մը մէջէն յաղթական ընթացք մըն է իրը: Այս այն շրջանն է ուր Վարդապետը կը բազմապատկէ կարծես ինքզինքը հասնելու համէն ուր եւ ինչ բանի մէջ որ իր առաքելութեան կոչումը կը կանչէր զինքը: Պոլիս, Եգիպտոս, դարձեալ Բարիզ ու դարձեալ Պոլիս իր համերգները ու դասախօսութիւնները, իր անձը ինքնին, կը տարածեն անպատմելիօրէն սրբազեղ Մեծ Ոգեւորութիւնը որ ազգային կեանքի վերադարձած գարունի մը այդ շրջանին իր բուն դիմագիծը կը հագցնէ: Ֆրանսական ու ոուսական նորագոյն երաժշտութեան հետ իր շփումը նոր ու գերագոյն կատարելութիւն մը բերած է հիմա իր ստեղծագործութիւններուն: Ու Պոլսոյ իր բնակարանին մէջ զոր կը բաժնէր նկարիչ Փանոս Թէրլէմէզեանին հետ եւ որ պոլսոյայ մտաւորականութեան հայ արուեստի օճախ մըն էր դարձած, համերգներու պատրաստութեան բոլոր յոգնութիւններէն յետոյ, անդադրում իր աշխատանքներն են հայ երաժշտութիւնը կառուցանելու, հիմնելի հայ երաժշտանոցի մը իբր զաղափարաբանական խորիսի, իր աշակերտներուն հասնելու, հայ ֆոքլորի եւ եկեղեցական երաժշտութիւնը նորագոյն եւ գեղեցկագոյն գործերով օժտելու: Կը սկսի նաեւ երաժշտութեան մեծ սեռերուն մէջ իր անձնական գործը բերելու աշխատանքներուն. "Անուշ"ին վրայ Օբեռայի մը պատրաստութեան:

Ու այսպէս՝ մինչեւ 1915-1916ի ճակատագրական թուականը...:

Ամբողջական Երաժիշտը

Ինչ եղաւ Կոմիտաս Վարդապետ իբր երաժիշտ: Սէկ կողմէ կայ ժողովրդական զգացումը որ Հայ երաժշտութեան ստեղծիչը, գոնէ վերստեղծիչը կը համարի զինքը. իր բերած երգերը պարզապէս իր անունովը կը կոչէ. "Կոմիտասի Երգեր": Միւս ծայրին կը հանդիպինք մարդոց—յաճախ կովկասահայեր որ իրմէ իր առաջին փորձերը գիտեն միայն շատ անգամ, կամ ուրիշներ որ երաժշտութեան կէս-հասկը՝ ցողներ են—որոնք զինքը կը համարեն երգերու պարզ հաւաքիչ մը ու դաշնաւորող մը լոկ:

Ճշմարիտ գնահատում մը իբր երաժիշտ մեծ Վարդապետի արժէքին՝ պիտի պահանջէր աւելի ուշադիր ու խորացող քննութիւն մը իր գործին ու անձին:

Յայտնի է թէ երաժշտութեան արուեստը մեծ կալուած մը կը ներկայացնէ որուն մշակները բազմատեսակ գործունէութիւններով կ'երեւին: Կան երաժշտութեան տեսաբանները, պատմաբաններն ու քննադատները որոնք արուեստին տեսութեամբ կը պարապին, անոր օրէնքները կ'որոնեն, անցեալ ու ներկայ ստեղծագործութիւնները կ'ուսումնասիրեն ու կը գնահատեն: Կան երաժշտական գործերը ստեղծողները բուն իսկ. յօրինողները, compositeurները: Կան եւ անոնք որոնք ստեղծուած գործերը կը մեկնեն ու իրենց վարած նուագախումբերուն եւ երգչախումբերուն միջոցաւ կը գործադրեն զանոնք—երաժշտական վարիչները, chef d'orchestre ները,

chef de choeur երր: Կան վերջապէս ուղղակի գործադրողները երաժշտական ստեղծագործութեան—նուազի ու երգի վարպետները, virtuose ները: Այս զանազան գործունէութիւնները, միեւնոյն արուեստին պատկանելով, հասարակաց կարողութիւնները պահանջելով հանդերձ, կ'ենթադրեն տակաւին իւրաքանչիւրին յատուկ թէքնիքներ, ծանօթութիւններ եւ շնորհներ: Այնպէս որ յաճախ այս կալուածներէն մէկուն մէջ փայլողը կրնայ անարժէք ըլլալ միւսներուն մէջ. ստեղծող մը, նոյն իսկ մեծ ստեղծող մը երաժշտական գործերու՝ կրնայ շատ քիչ բան գիտնալ երաժրշտութեան պատմութենէն կամ տեսաբանութենէն, կամ բնաւ չըլլալ երգի կամ նուազի վարպետ մը. եւ փոխադարձաբար:

Արդ պէտք է նախ դիտել թէ Կոմիտաս Վարդապետ այս բոլորը եղաւ միանգամայն՝ Հայ Երաժշտութեան համար: Այսինքն եղաւ ամբողջական, ^{integral} երաժիշտ մը: Ու կ'աւելցնել եւ ընդունիլ անմիջապէս թէ այդ բոլորը եղաւ իսկապէս ինքնատիպ խորունկ տաղանդով, տեսակ մը հանճարով:

Տեսաբանը

Կոմիտաս Վարդապետ կը ներկայանայ նախ իբրեւ հայ երաժշտութեան մեծ տեսաբանը: Մանաւանդ Պեռլինի մէջ իր երաժշտական ուսումը խորացնելէ վերջ իր մեծ մտահոգութիւնը եղաւ Հայ Երաժշտութեան յատուկ օրէնքներուն թափանցումը: Ու պրոէկտէն Պեռլինի իր տարիներուն կը սկսի շարք մը գործերու որոնք ուսումնասիրութիւններ են հայ կրօնական եւ աշխարհիկ երաժշտութեան մասին ու նաեւ հայոց հարեւան ժողովուրդներու երաժշտութեան: Պեռլինի երաժշտանոցին ներկայացուցած իր ուսումնասիրութիւններէն մէկը քրտական երգերու մասին է: Կոմիտաս Վարդապետի այս հիմնական ու տեսաբանական որոնումներուն արժէքը հասկնալու համար հարկ է զանոնք ըմբռնել իրենց առաջնորդող գաղափարին ու ոգիին մէջ որ կը տարբերի սովորական հմտութեան մը տուն տուող սկզբունքներէն: Մեր գրականութեան ու զանազան արուեստներուն մասին եղած բնասիրական ու հնաբանական աշխատութիւնները շատ անգամ ամուլ եղած են, գործերուն բուն իսկ արուեստագիտական հասկացողութեան եւ մեր նոր ստեղծագործութեան կարելիութիւններուն տեսակէտով, որովհետեւ անոնց մէջ ընդհանրապէս հմտութիւն կայ հմտութեան համար լոկ: Գործերու թուում, թուակարգութիւն, ժամանակագրական ճշդում, անոնց արտաքին ու նիւթական նկարագրութիւնը, անոնց մէջ տեսնուած օտար ազդեցութիւններու եւ տարրերու յայտնաբերում. ահա ինչ որ շատ անգամ ըրած են ու կ'ընեն մեր եւ ~~տարբեր~~ ուրիշ ազգերու բանասերներն ու հնաբանները:

Բայց այս բոլորը եթէ կարելորութիւն մը ունին, այդ կարելորութիւնը արտագեղագիտական է. քաղաքական ու քաղաքակրթական պատմութեան տեսակէտով, ցեղաբանական ու լեզուագիտական տեսակէտով կ'արժէ միայն: Գործերու բուն իսկ արուեստագիտական հասկացումը, արժեւորումը եւ մանաւանդ նոր ստեղծագործութեան աշխատանքը քիչ բան ունին սպասելիք այդ ամենէն: Այս վերջին տեսակէտներէն

ամենէն էականը այն չէ որ, օրինակի համար, զիտնանք թէ այդ գործերուն մէջ կան շատ մը բաներ օտարէն փոխ առնուած—աշխարհի մէջ չկայ արուեստի գործ մը որ ազդեցութիւններ կրած չըլլայ, նիւթապէս սնած չըլլայ զանազան օտար տարրերէ: Խնդիրը այն է թէ ինչպէս այդ բոլոր ինքնեկ կամ օտարամուտ տարրերէն էապէս նոր ու ինքնատիպ ստեղծագործութիւն մըն է կատարուեր: Խնդիրը այդ իւրացնող ու նորաստեղծող ուժին օրէնքները, նկարագիրը, ոգին ի յայտ բերելն է: Այն ոգին որ իւրաքանչիւր իրաւ ստեղծագործութեան իսկութիւնն իսկ է, եւ որով բան մը կ'արժէ այդ գործը, Այս իսկութեան զիւտը միւս կողմէ մեծ արժէք կրնայ ներկայացնել ազգային արուեստի նոր իրագործումներուն համար, որովհետեւ կենդանի աւանդութեան մը ինքնատիպ ոճին մէջ ճամբայ մը կը ցուցնէ նոր ստեղծագործութիւնները:

Կոմիտաս Վարդապետի երաժշտագիտական որոնումները այս ոգիով եւ ուղղութեամբ կատարուած են, ու ասկէ կ'ուզայ անոնց անկշռելի կարեւորութիւնը:

Ըսի որ Հայ Երաժշտութեան հետ իր ուսումնասիրութիւններուն առարկայ ըրած է մեր հարեւան ժողովուրդներուն, Քիւրտերուն, Արաբներուն, Պարսիկներուն, Վրացիներուն, եւ բիւզանդական երաժշտութիւնները եւս: Այս բանը կարող կ'ընէ զինքը անշուշտ մէկ կողմէ ի յայտ բերելու մերինին կրած ազդեցութիւնները, բայց մանաւանդ խորագոյնս հասկնալու եւ շեշտելու ինչ որ մեր արուեստին մէջ կայ էապէս ինքնուրոյն, եւ որով մեր արուեստը կը հակադրուի միւսներուն: Այդ բոլոր երգերը մակերեսային լսողութեան մը համար պիտի շփոթուէին ու նոյնացուէին "արեւելեան" անորոշ պիտակին տակ: Քանի մը "ԼէԼէ" է եւ "ԼՕԼՕ" է ու քանի մը երկարածիգ կանչէ խաբուելով, օտարներ շատ անգամ այդպէս, կը տարուին նոյնացնելու հայ ժողովրդական երգը քրտականին հետ: Իսկական թափանցումը զոր կը կատարէ Կոմիտաս Վարդապետ այդ տարբեր երաժշտական ֆոքլորներուն հաւասարապէս, կարող կ'ընէ զինքը բռնելու եւ շեշտելու էական եւ սկզբնական ինքնուրոյնութիւնը հայ երգին այդ բոլոր միւսներուն դիմաց:

Նոյն բանը նաեւ մեր կրօնական երաժշտութեան եւ ասորական եւ բիւզանդական եկեղեցական երգին փոխարարբերութեանց խնդրին մէջ:

Ու այս բոլորը կատարուած են ոչ թէ լոկ հայ երաժշտութեան ինքն իր մէջ հասկացողութեան համար այլ նաեւ անոր արդիական վերամշակութեան եւ նոր ստեղծելի գործերուն ինքնատիպութեան մտահոգութեամբը:— Որովհետեւ եւրոպական թէքնիքով նոր հայ երաժշտութիւն մշակելու գործին մէջ հայ երաժշտութեան ինքնուրոյն օրէնքներուն տգիտութիւնը անգոյն կամ պարզապէս եւրոպական բնաւորութեամբ գործերու պիտի առաջնորդէր հայ երաժիշտները: Եւ ընդհակառակը, ինչպէս Կոմիտասի յըլլայ կրօնական ըլլայ ժողովրդական երաժշտութեան դաշնաւորման պարզան է այդ, հայ երաժշտութեան յատուկ օրէնքներուն եւ նկարագրին իրական ճանաչումը պիտի բերէր, հակառակ եւրոպական թէքնիքին գործածութեան, էապէս ինքնատիպ հայ ստեղծագործութիւններ, որոնք ատով իսկ ու ատով միայն արդէն, եւրոպական ճաշակին համար ալ նոր, իրապէս շահեկան գործեր պիտի ըլլային:

Համարձեց
այդ
ճիշդ:

Համոզուելու համար ասոր կը բաւէ բաղդատել Հայ Պատարագի Կոմիտասեան եւ Եկմալեան դաշնաւորումները:

Հայ երաժշտութեան տեսարանութեան նուիրուած Վարդապետին հրատարակած գործերը փոքրաթիւ են (2). այդ մասին իր կարեւորագոյն երկասիրութիւնները անաւարտ մնացին եւ շատեր ծրագրային վիճակի մէջ միայն. այս մեծ դժբախտութիւն է անշուշտ հայ երաժշտութեան տեսարանութեան ու պատմագրութեան համար:

Բայց այդ փոքրաթիւ երկասիրութիւններուն մէջ եւ այն դասախօսութիւններուն ու հաղորդագրութիւններուն մէջ որ կու տար ինք այդ նիւթերուն շուրջը, ի յայտ բերուած են արդէն հայ երաժշտութեան յատկանիշներուն եւ օրէնքներուն մասին ամենակարեւոր ճշմարտութիւններ: Վարդապետը ճշդած է արդէն մէկ քանին այն օրէնքներէն որոնցմով հայ երաժշտութիւնը ինքնուրոյն բնոյթ մը կը ներկայացնէ բաղդատմամբ եւրոպական դասական երաժշտութեան մէկ կողմէ՝ եւ հարեւան ժողովուրդներու երաժշտութիւններուն միւս կողմէ:

Ունինք նախ հայ երաժշտութեան կշռական (rhythmique) ինքնատիպ կառուցուածքի օրէնքը: Ծանօթ է թէ եւրոպական դասական երաժշտութիւնը շինուած է 2ի, 3ի, 4ի չափերուն վրայ, կանոնաւոր ու միօրինակ ընթացող եղանակներով: Երաժշտական նախադասութիւնը անոր մէջ, բաժնուած է քանի մը անգամ հաւասար հատուածներու (ինչպէս քառակուսի կոչուած նախադասութեանց պարագային) եւ անոնց մէջ ալ բացի նախադասային գլխաւոր շեշտէն միւսները միշտ հաւասար թիւով ամանակներով կը վերադառնան: Ատկէ՝ այդ երաժշտութիւնը գրելու դրութիւնը որ չափի իրարմէ հաւասարապէս հեռու գիծերով կը բաժնէ երգին թաւալումը: Եթէ եւրոպական ձայնագրութեամբ ստիպուած ենք գրելու այսօր հայ երգերը, անոնց կիրարկուած այդ դրութիւնը պէտք չէ տանի մեզի կարծելու թէ այդ երգերը եւրոպականներուն կշռականութիւնը, շեշտաւորումը ունին: Այսպիսի սխալ մը անճանաչելի պիտի դարձնէր հայ երգը: Այս պատճառաւ իր հրատարակած երգերու առաջին հաւաքածոյին սկիզբը Վարդապետը կը դնէ կարեւոր ազդարարութիւն մը ուր կ'ըսէ. "Հայ ժողովրդական երաժշտութեան մէջ շեշտն ու ամանակը՝ իրարուց անկախ են. ուստի այս երգերն ասելու է յենելով քառերին ու խազերի վրայ դրուած նիշերին եւ ոչ թէ արեւմտեան երաժշտութեան շեշտական օրէնքներին": Այս պատճառաւ դարձեալ իր Պատարագին մէջ Վարդապետը կը հրաժարի նոյնիսկ յաճախ եւրոպական մեթոտին պահանջած չափի գիծերու գործածութենէն:

Այլապէս կենդանի է, ազատ ու պէսպիսուն հայ երգին կշռական կառուցուածքը: Ահա թէ ինչ կը գրէ ասոր մասին Վարդապետը իր թուղթերուն մէջէն գտնուած նօթի մը մէջ. "Հայ երաժշտութեան մէջ ոտքերն բաժանուած են ոչ թէ շեշտաւորութեան օրէնքով, այլ ամանակապարութեան օրէնքով: Պարզ է, որ եւրոպականը հիմնըւած է շեշտերի համաշար դասաւորութեան վերայ, իսկ հայկականը ամանակների:

(2) Այսօր, ասոնց մէկ ամբողջական հաւաքածոն, լոյս ընծայուած է Հայաստանի Պետհրատի կողմէն:

Ամանակների կարծ եւ երկար վանկերն իրար յաջորդում են ճիշդ այնպիսի օրէնքով, որպիսին ունի բանաստեղծութիւնը. իսկ շեշտերն ազատ են միանգամայն: Երկու տեսակ շեշտադրութիւն կայ, բառի եւ մտքի, կամ քերականական եւ տրամաբանական շեշտադրութիւն: Բառի շեշտը սերտ կապ ունի եղանակի հիմնածայնի հետ. իսկ մտքինը եղանակի հիմնածայնից միշտ վեր է մէկ կամ մի քանի ծայն. թէեւ երբեմն, եթէ եղանակն ընկճուած գոյն ունի, մտքի շեշտն ու բառինը միանում են:

--Կարծ եւ երկար վանգերն ունեն որոշ դասաւորութեան օրէնք, որով կազմում են հատածները եւ ոտքերը:

--Հայ ժողովրդական երաժշտութեան մէջ ոտներն համապատասխանում են բանաստեղծութեան ոտներին, այսինքն երկար ու կարճ վանգերի դասք, եւ ո՛չ թէ, որպէս եւրոպական երաժշտութեան մէջն է, շեշտերի դասք: Եւշտի գործը միանգամայն համապատասխանում է արձակ բանաստեղծութեան ոգուն": Սա կը նմանի ուրեմն շատ աւելի յունական հին երաժշտութեան մէջ գոյութիւն ունեցող բայց յոյն բանաստեղծութեամբ միայն կիրարկեալ ձեւի մէջ մեզի հասած կշռականութեան: Հայ երգին մէջ կան այսպէս իբր անոր կշռական միութիւնները՝ երկար ու սուղ, շեշտուած եւ անշեշտ վանկերու տիպար խումբեր (temps-type), եւ այդ տիպար խումբերէն տարբեր տեսակներ միանալով կը կազմեն երաժշտական հատածը (mètre) եւ հատածներու միացմամբ երաժշտական նախադասութիւնը: Այսպէս կազմուած ամբողջներուն վերադարձը կը ստեղծէ կտորին կշռութեան ^{ստեղծուած} ձեւը. եւ յառաջ կը բերէ կշռոյթային միութեան զգացումը:

Այսպէս՝ "Պինկէօլ" երգին մէջ (սուղ վանկերը կը նշանակեն ^չ նշանով, երկար վանկերը գծիկներով, շեշտուած ամանակները վրան դրուած շեշտով. ստորակէտները կը բաժնեն ~~temp~~ temps-type երը, եւ շեղ գիծերը՝ հատածները):

ին-չո՛ւ պին-կէօլը մը-տար Պաղի պըլ-պուլը գը-տար

ին-չո՛ւ կար-օյին առ-ար անտէր ու գերի դառ-ար

(2 անգամ)

տը լէ մը կոնտէ հապօն դըի կոնտէ (2 անգամ)

դըի-կոն դըի-կոն դըի-կոնտէ հապօն կոնտէ դըի-կոնտէ

եւայլն (2/անգամ)

Հին յունական կշռականութեան տեսակէն չէ՞ աս: Կշռական այս կառուցուածքին քովոր թոյլ կու տայ նոյն կտորին մէջ ամենաբարձր կշռական եղանակափոխումները (modulation rythmique ները) եւրոպական դասական երաժշտութիւնը իր նախասիրած isochronisme-ով, չափական հաւասարութեամբ, կշռական տեսակէտով աղքատ պարզութեամբ մը շինուած կը ներկայանայ: Դրութիւնը հոս ըլլալով շատ աւելի բարդ՝ անով հայ երգը բաղդատմամբ եւրոպական դասականին կշռականօրէն աւելի կենդանի, եռանդուն, այլազանեալ երեւան կու գայ: Ասիկա մին է այն պատճառներէն որ հայ երգերու ունկնդրութիւնը մեծապէս շահեկան կը դարձնէ եւրոպա-

կան նոր երաժշտութեան վարպետներուն:

Կոմիտաս Վարդապետի մշտական փառքը պիտի մնայ հայ երաժշտութեան կշռական կառուցուածքին այս բնոյթին յայտնագործումը:

Բայց նոյնքան կարելորդ՝ հայ երգերու կշռականութեան մասին իր մատնանշած միւս օրէնքը՝ հայ երգուածքին մէջ բառերու շեշտաւորումին վերաբերմամբ: Սա կը դիտէ թէ բառերու եւ երգի յարաբերութեան մէջ բնագոյն իրագործուած կը գտնենք հայ երաժշտութեան կողմէ այն՝ ինչ որ Եւրոպայի երգի, մասնաւորաբար գուսաներգութեան մեծագոյն վարպետները միայն յաջողած են ընելու, ինչպէս Վակնէոր, այսինքն ամբողջական պատշաճութիւն մը բառերու իմաստին եւ անով անոնց շեշտումի, ու եղանակի երաժշտական շեշտումին մէջ: Բանաստեղծական շեշտում եւ երաժշտական շեշտում գիրար կը ծածկեն հայ երգին մէջ, մինչդեռ շատ Եւրոպացի երաժիշտներ, նոյնիսկ մեծերէն, անհոգ են այդ մասին: Իսկ հայ բառերը, կը դիտէ Կոմիտաս Վարդապետ, նախնականօրէն շեշտուած են իրենց վերջընթեր վանկին վրայ. ժողովրդական երաժշտութիւնը կը յարգէ այդ բանը ոչ միայն կշռականօրէն շեշտելով այդ վանկը, այլ եղանակի ծայնելեւէջին մէջ այդ վանկին ղնելով միշտ աւելի բարձր կամ գոնէ հաւասար բարձրութեամբ ծայն մը բաղդատմամբ անոր յաջորդող եւ հետեւաբար շեշտ չընդունող վերջին վանկին:

Կշռական այս օրէնքներու գիւտը հայ եղանակներու երգեցողութեան եւ նուագումին ոճին համար էական ցուցմունքներ կը բերէ որոնց վրայ կը հիմնէ Վարդապետը իր երգելու եւ երգերը ուսուցանելու եղանակը:

Հայ երաժշտութեան մէջ ծայնելեւէջին ուսումնասիրութիւնը նոյնքան կարելորդ յայտնութիւններու առաջնորդած է գինքը: Իր որոնումներէն կը հետեւի որ հայ կրօնական երգերը կառուցուած են քառալարերու վրայ որոնցմէ երբ երկրորդ մը կ'ըլլայ երգի մը մէջ ան իբր առաջին ծայն կ'ունենայ իր նախորդին վերջին նօթը: Իսկ հայ ժողովրդական երգերու ծայնելեւէջը կառուցուած է ոչ Եւրոպական դասական երաժշտութեան գործածած երկու աւագ եւ կրտսեր (*gamme majeure* եւ *mineure*) ծայնաշարերուն վրայ (թէեւ անոնք ալ գործածուին), ոչ ալ միւս կողմէ արաբական-արեւելեան յաւելեալ երկեակով քառալարին, այլ ուրիշ աւելի բազմաթիւ ծայնաշարերու վրայ որոնք հին յունական երաժշտութեան տեսաբաններու գործերուն մէջ անուն ստացած են: Այսպէս հայ երգերը կառուցուած են ամենէն շատ Փոփոկական եւ ենթափոփոկական ու նաեւ Տորէական, ենթատորէական, Լիւտիական, ենթալիւտիական եւ այլն կոչուած *mode* օրինակներուն վրայ: Այս պարագան իր կարգին կը գատորոշէ հայ երգերու հնչական կլիման թէ յետմիջնադարեան Եւրոպականներէն եւ թէ արեւելեան-արաբականներէն: Այս իրողութիւնը մէկն է այն պատճառներէն որոնցմով հայ երգը արեւելեան բնուշուրթիւն մը, արեւոտութիւն մը կրելով հանդերձ, մեղկ չէ բնաւ, արիական ուժի եւ յրստակ ձեւի նկարագրով մըն ալ ու մանաւանդ կը հրապուրէ զմեզ:

Հայ երգերու հիմ կազմող ինքնուրոյն ծայնաշարերու այս յայտնաբերումը այս անգամ Կոմիտաս Վարդապետի դաշնաւորման աշխարհութիւնները առաջնորդող սկզբունքները կու տայ իրեն: Եւրոպական դաշնաւորման մէջ կը տիրէ դասական աւագ եւ կրտսեր ծայնաշարերէն սերող երրեակի (tierce) ներդաշնակութիւնը: Արդ, հայ երգերը առհասարկ այդ ծայնաշարերուն վրայ հիմնուած չըլլալով, աւագ կամ կրտսեր երրեակի դասական գործածութիւնը պիտի եղծէր շատ անգամ եղանակներու ներհաշնակային իմաստը: Իր Պատարագին եւ մանաւանդ ժողովրդական երգերու իր վերջին դաշնաւորումներուն մէջ Վարդապետը կը զգուշանայ հետեւաբար, երրեակներու սովորական գործածութենէն ու կը նախընտրէ քառեակի ու հնգեակի դաշնակութիւններ ու մանաւանդ ինքնատիպ հակահնչիւններ (dissonances) ու այս կու տայ, մանաւանդ եւրոպացիներուն համար, մասնաւորապէս ինքնատիպ ներդաշնակային հրապոյր մը իր իմբերգներուն:

Կոմիտաս Վարդապետի երաժշտական հետազոտութիւններուն այս արդիւնքները մեծ եւ լուսաւոր հորիզոններ կը բնային Հայ ցեղի ոչ միայն երաժշտական կազմութեանը այլ եւ Հայ պատմական, ազգագրական անցեալի հասկացողութեան տեսակէտով: Յայտնի կ'ըլլար որ Հայոց ժողովրդական երաժշտութիւնը կու գար ամենահին, նախաքրիստոնէական աւանդութենէ մը որ հայոց Փոիւզական-արիական ծագումին նոր ու արտասովոր փաստեր կը բերէր: Բարիզի մէջ 1914ին զումարուած երաժշտագիտական համաժողովին մասնակցող երաժշտութեան գիտունները մեծ յայտնութիւններու առջեւ գտած էինք իրենք զիրենք Վարդապետին հաղորդագրութեան մէջ առաջ բերուած իրողութիւններովը: Անոնց լոյսին տակ ~~սակ~~ հայ երաժշտութիւնը կը ներկայանար որպէս այն սակաւաթիւ արուեստներէն որոնք կորսուած հին յունական եւ արիական երաժշտութեան մասին կենդանի գաղափար մը տալու կոչուած էին:

Յօրինողը

Եթէ հայ երաժշտութեան տեսաբանը այդքան մեծ ու բեղուն եղաւ Կոմիտաս Վարդապետին մէջ, ատոր բուն պատճառը հոն է որ ան չէր իր նիւթին լոկ դուրսէն, առարկայօրէն մտնեցող գիտուն մը, այլ զայն ներսէն հասկցող, բոնող ու ապրող էն հարագատ տեսակէն արուեստագէտ մը որ հասած էր Հայ Երգին Ռճին իսկութեանը հիմնական, կեդրոնական յայտնատեսութեան, intuition լին, որու լոյսին տակ կը պարզուէր իրեն եւ իր միջոցաւ ուրիշներուն Հայ Երաժշտութեան ինքնատիպ էութեան գաղտնիքը: Այդ լոյսին տակ յայտ բերուած օրէնքները իրենց կարգին, ինչպէս ըսի, պիտի առաջնորդէին զինք իր բուն արուեստագէտի գործին:

Ինչ եղաւ արուեստագէտին, յօրինող արուեստագէտին արժէքը Կոմիտասի մէջ:

Հոս է որ զինքը ստորագնահատողներ կը թօթուեն իրենց ուսերը. "Կոմիտաս Վարդապետ յօրինող երաժիշտ մը չեղաւ, չը կրցաւ ըլլալ երբեք, կ'ըսեն, այլ երգեր հաւաքող մը եւ դաշնաւորող մը միայն ու պարզապէս": - Հարցը այդքան ալ պարզ

չէ սակայն ^{հարգապետ} բուն իսկ իրմէ յօրինուած քանի մը ծանօթ կտորներ փոքր ու երկրորդական բաներ են, ընդհանրապէս հանդիսական առիթներու համար շինուած, որոնց ինք ալ կարեւորութիւն չէր տար: Կարող չէ՞ր, չպիտի ըլլար Կարգապետը, տարաբախտ Կարգապետը, իր բուն իսկ անձնական ստեղծագործութիւնը բերելու Հայ Երաժշտութեան: Պէտք չէ վճռել, չենք կրնար վճռել: Երկար ատեն այդ ուղղութեամբ չէ խորհած բնաւ: Ուրի՞շ՝ ըստ իրեն եւ ըստ մեզի ալ, աւելի՛ անմիջականօրէն կարեւոր գործ ունէր ընելիք, ու այդ ըրաւ: Բայց անիկա արուեստի, ստեղծագործութեան կեանքէն շատ կանուխ խլուեցաւ. իր կարողութիւններուն ամենէն հասուն ու բեղուն շրջանին իսկ—ոչ շատ աւելի քան 45 տարեկանին: Իր մտերիմները ամէնքն ալ գիտեն որ այդ ատեն արդէն ձեռնարկած էր պատրաստութեանը մեծ գործի մը որ իր ծրագրին մէջ իր բուն անձնական բերումը պիտի ըլլար երաժրշտութեան: Յովհաննէս Թումանեանի "Անուշ" ին վրայ • բեռայի մը պատրաստութեան՝ որուն համար կը խորհէր յօրինել նոր, հայկական նուագախումբ մը, եւրոպական գործիքներու մէջէն ընտրելով եւ անոնց միացնելով հայկական ու արեւելեան գործիքներ, սրինգներ մասնաւորաբար: Ի՞նչ պիտի ըլլար այդ գործը. պատճառներ ունիմ կարծելու թէ մեծարժէք պիտի ըլլար: Ինծի երգած ու նուագած է անոր նախերգանքը եւ խոր տպաւորութիւն եմ կրած:

Բայց նկատի չունենալով այս ամէնը ու առնելով Կարգապետին հայ եկեղեցական ու ժողովրդական երգերու յարդարման ու դաշնաւորման աշխատանքը միայն, ամենամեծ սխալ մը պիտի ըլլար սովորական, ամէն երաժշտական ուսում ստացած, նոյնիսկ տաղանդաւոր երաժշտի կարելիութիւններուն մէջ գոնուող գործի մը հետ շփոթել զայն:

Արդարեւ Կոմիտաս Կարգապետ բերած է իր դաշնաւորումներուն մէջ երաժշտական թափանցման, մեկնութեան այնպիսի խորութիւն մը, գրելակերպի այնպիսի նորութիւն մը, ո՞՞ր ինքնատպութիւն մը որ անոնք սովորական դաշնաւորումներու սահմանէն անչափօրէն անդին կ'անցնին իսկական ու մեծարժէք ստեղծագործութիւններու կարգին տեղ առնելու համար:

Հայ երգերուն վրայ Կարգապետին կատարած աշխատանքը նախ անոնց էութեան ինքնայատուկ էսթետիքին, ինքնուրոյն ոգին թափանցման, լայնագոյն իմաստով հասկացման գործը եղած է: Գերազանցօրէն եւ արդարօրէն ինքնալստահ ճաշակով մը կը մօտենայ ան Հայ՝ ըլլա՛յ եկեղեցական, ըլլա՛յ աշխարհիկ երգերուն ու քիչ առաջ յիշուած Հայ Երաժշտական Բժին իսկութեանը մասին իր ունեցած—կարծես ցեղային երաժշտական վերապրող հանճարէ մը իր ստացած—յայտնատեսութեան լոյսովը կը զատէ հարազատ հայ եղանակները օտարամուտ երգերէն: Այդ ընտրուած երգերն ալ իրենց կարգին նոյն յայտնատեսութեան լոյսով կը յղկէ, մաքրելով զանոնք անոնց վրայ իսկ կապած ու անոնց բնութիւնը եղծող օտարամուտ կամ ժողովրդական աղաւաղումներէ եկած տարրերէն. ու կ'ունենայ զանոնք իրենց սկզբնատիպ, առոյգ վայելչութեանը մէջ: Մասնաւորաբար, այսպէս, մեր կրօնական երգերը իր բացարձակ ճաշակին անվերադառնալի վճիռներուն տակ կը ձգեն իրենց վրայի վերջամուտ,

բայց թերեւս դարերէ ի վեր խաւացած անիմաստ երկարած գումները, արեւելեան զարդողորումները, մեղկ ու քառորդ ձայնային (enharmonique) ծամծմուքները: Այսպէս մէջտեղ կ'իւնայ հարազատ հայ եղանակը՝ կրօնական ըլլալ թէ ժողովրդական, պարզ է, ժուժկալ եւ առնացի գիծերով, գուարթութեանը մէջ իսկ լուրջ ու տրի-րութեանը մէջ իսկ երանական, բանաւոր՝ կառուցուածքով, բայց ^և զարմանալիօրէն կենդանի, խորեռանդէ միեւնոյն ատեն կորովի ու շնորհալիօրէն քաղցր եւ գերագոյն գաղտնիքը իր անասելի հմայքին—պիտի ըսեմ սուրբ հմայքին—դէպի խորհրդաւոր աստուածային ներկայութիւն մը թելող թոնչքով մը վսեմ, խոռվիչ: Կոմիտաս Վարդապետի այսպէս մեզի բերած հայ եղանակը իր բանական պայծառութեամբը, եւ իր առնացի կորովովը, իր մաքուր զգաստութեամբը, յայտնապէս արեւմտեան—արիական է, բայց եւ իր արեւահամ քնքշութեամբը, իր երազայնութեամբը արեւելեան միեւնոյն ատեն: Ու ի վերջոյ ո՛չ այդ եւ ո՛չ այն, ինչու չըսել մէկ բառով՝ հարազատօրէն ու ինքնուրունապէս հայկական է. հայկական mystique է մը բիւծ:

Բայց այս եղանակները արդիական Մեծ Երաժշտութեան մէջ մտցնելու, զանոնք նրբացած ու յառաջաց ճաշակներէն վայելելի դարձնելու ու անկախաբար ալ եւրոպական ճաշակէն իրենց իրենց մէջ իսկ զանոնք ամբողջովին արժեցնելու եւ անոնց դեռ քիչ ի կարողութեան (en puissance) պարունակած երաժշտութիւնը բովանդակօրէն իրագործելու, acte ի բերելու համար հարկ էր դաշնաւորել: Մեներգի յարմար դաշնակի կամ երգեհոնի ընկերակցութիւն յօրինել ու խմբերգի յարմարներուն՝ բազմաձայնութիւն հագցնել:

Անհունօրէն դժուարին ինդիր: Սովորական արուեստագէտի մը համար ատկէ դիւրին ու պարզ բան չկայ: Եւրոպական դաշնեակները (accord) պատրաստ են, դաշնաւորման դասական կանոնները՝ յայտնի. պիտի բաւէր զանոնք կիրարկել մեր երգերուն:

Մանաւանդ որ այս տեսակ դաշնաւորումը նոր բան ~~է~~ ալ չէր. Կարամուրզա եւ Եկմալեան ժողովրդական բաւական երգերու եւ Հայ Պատարագին համար տուեր էին ստոր օրինակը:

Բայց գերազանցօրէն նուրբ եւ խորագգած արուեստագէտին համար, որպիսին էր Կոմիտաս, հարցը կը ներկայանար այլապէս ^{այսինքն} պատմասիանատու: Այդ երգերը միաձայն ստեղծուած էին ու պարզուկ, գեղջուկ բերաններէ երգուած այդպէս: Հայ ժողովուրդի երաժշտական բնագործ, հայկական բնաշխարհի բնութեանը միացած՝ տուած էր այդ երգերուն երաժշտական այնպիսի դրոշմ մը, երանգներու այնպիսի փափկութիւն մը որ անոնց իսկութիւնը կրնար եղծուիլ անմիջապէս եւրոպական ներդաշնակութիւններու առաջին հպումին իսկ: Մեր երգերու շունչը կրնար խեղդուիլ եւրոպական գիտուն ներդաշնակութիւններուն ծանր փաթաթումին մէջ: Հայկական ազատ լեռներուն վրայ բուսած ու ապրող այդ փոքրիկ վայրի երաժշտական ծաղիկները ի՞նչ պիտի ըլլային իրենց հողէն փրցուած ու մեծ քաղաքներուն եւրոպական Արուեստի պատմներուն փարթամ ծաղկամաններուն մէջ բերուած:

Պէտք է ըսել որ Կոմիտաս Վարդապետ իրապէս հանճարեղ լուծում մը գիտցաւ բերել այս հարցին:

Նախ պատշաճագոյն ընտրութեամբը այն ներդաշնակութիւններուն եւ ներդաշնակա-
յին շղթայումներուն զորս գործածեց ժողովրդական թէ եկեղեցական եղանակներու
իր բազմաձայն խմբագրութիւններուն մէջ: Եւրոպական դասական ներդաշնակութիւն-
ները եւ շղթայումները չեն անոնք, ինչպէս է պարագանօրինակ Եկմալեանի Պատա-
րագին մէջ: Դասական երրեակին միօրինակ գործածութիւնը այսպէս, ըստ արդէն,
որ պիտի եղծէր այդ երգերուն ներդաշնակային ի կարողութեան գոյ նկարագիրը,
չատ անգամ ու հետզհետէ աւելի վտարուած է այդ դաշնաւորումներէն: Փոխարէն
յաճախ քառեակի կամ հնգեակի վրայ հիմնուած դաշնեակներ եւ մանաւանդ նոր հա-
կահնչուն (dissonnant) դաշնեակներ գործածուած են որոնք բարեբախտօրէն կը
չեշտեն այդ երգերու յատուկ ներդաշնակային դիմագիծը:

Յետոյ՝ դաշնաւորման համար իր գործածած խմբագրութեան եղանակովը: Պատ-
շաճօրէն բարեխառնուած համեղանակային (contrapointique) կերպն է այդ "ուղ-
ղածիգ գրելակերպին դէմ հորիզոնական գրելակերպը", որ բազմաձայնութիւնը ձեռք
կը բերէ ոչ թէ մայր եղանակին տակ պարզապէս դաշնեակներ դնելով այլ այդ
մայր եղանակին ընկերակցելով ուրիշ՝ քայց անոր բնութենէն սերած, անոր ազգա-
կան մէկ կամ աւելի եղանակներ. ու այսպէս մայր երգին շուրջը յօրինուած ե-
ղանակներու փունջով մը տալով մեզի բազմաձայնութիւնը: Դաշնաւորելու այս
բազմեղանակային (polyphonique) կերպը որ յատկանշական է եւրոպական նոր
համանուագային (symphonique) ոճին, կը պահէ իր երգերուն՝ իրենց էպէս մե-
ղեղին (melodique) հանգամանքը: Այդ ընկերացող եղանակները վարպետին սեփհա-
կան ներշնչեալ յօրինումներն են, որոնց իւրաքանչիւրը մայր եղանակի ի կարո-
ղութեան գոյ մէկ երեսը երեւան կը բերէ, կ'իրագործէ, հետեւաբար ոչ միայն
չի խեղդեր, չի խեղաթիւրեր անոր ոգին այլ զայն աւելի բազմակողմանիօրէն կը
վերստեղծէ, զգալի կը դարձնէ, կը ճոխացնէ, ամբողջովին կը ցայտեցնէ:

Ու վերջապէս երգերուն դաշնաւորումին մէջ իր բերած երաժշտական նկարչա-
գեղութեան pittoresque ի, տեղական գոյնի մտահոգութեամբը որ խմբերգական
հնչականութեան գմայլելի գիւտերով այդ երգերուն շուրջ պահել յաջողեցաւ
անոնց բնիկ միջավայրը, մթնոլորտը, երաժշտական կլիման կարծես:

Վասնզի Կոմիտաս՝ Պաիին կամ Սէն Սանսին նման "ճարտարապետ-երաժիշտ" մը
ըլլալէ, աւելի, Վակնէտին կամ Տէպիւսիին նման "բանաստեղծ-նկարիչ-երաժիշտ"
մը եղաւ մանաւանդ:

Կոմիտասի դաշնաւորումներուն մէջ գլխաւոր երգին շուրջ, այսպէս, երբեմն
ոգեկոչուած կը գտնենք երգին արթնցուցած արձագանգները, պիտի ըսէիր հայ
սարալանջերուն վրայ ("Սարերի վրով գնաց"ին կամ "Կալերգ"ին մէջ). պարի
եղանակներուն ընկերացող պարի քայլերուն ու թմբուկներու թափահարումը
("հով լինի"ին, "Սօնա Նար"ին, "Առաւօտուն բարի լուս" սքանչելի հարսներ-
գին մէջ այսպէս) գեղջկական բակին՝ կթուող այծերուն զանգակիկներուն հըն-
չիւնին անորոշ արձագանգները՝ "Հինգ էժ ունիմ" կոչուած փոքրիկ գլուխ գոր-
ծոցին մէջ, ալիքներու քաղցր վէտվէտումը իր մէկ ուրիշ գլուխ գործոցին՝

"Լուսնակն անուշ"ին մէջ: Բաղդատեցէք այս կտորները եւրոպական սովորական խմբերգներուն լոկ ներդաշնակային հնչողութեան հետ. հոս նրբագոյն երանգներու գերազանց տըւչութիւն (rendu) մը պիտի գտնէք որուն նմանը Տէպիւսիի՝ Շառլ Տ՝Օուլէանի տաղերուն վրայ յօրինած երեք խմբերգներուն ու քանի մը ողեսական խմբերգական գործերուն մէջ հանդիպած եմ միայն: Եւրոպական երաժշտութիւնը, մանաւանդ նորը, երաժշտական նկարչագեղութեան հոյակապ տպաւորապաշտ էջեր տուած է անշուշտ, քայց ամէնքն ալ նուագախումբի համար. քիչ անգամ հոն կը գտնենք խմբերգական արուեստի այն բարձրութիւնը որ Կոմիտասնր եղաւ:

Անշուշտ Վարդապետը մէկէն չհասաւ այս կատարելութեան: Իր առաջին, մանաւանդ կրօնական երաժշտութեան դաշնաւորումները դեռ գերմանական դասական եւ ոմանթիկ խիտ ներդաշնակութիւններով ծանրաբեռն են: Բայց մանաւանդ Բարիզ կատարած իր ծամբորդութիւններով նորագոյն ֆրանսական եւ ողեսական երաժշտութիւններուն իր ծանօթացումը զինքը անօրինակ կերպով նրբացուց իր ծաշակին ու արուեստի ըմբոնողութեանը մէջ ու իր բնագոյն ալ օգնութեամբը հասաւ համերգական խմբագրութեան այդ անգերազանցելի վարպետութեանը:

Ու այսպէս ունեցանք հայ կրօնական երաժշտութեան կալուածին մէջ Վարդապետին Հայաստանեայց Եկեղեցւոյ Պատարագը. մեծարժէք գործ (Յ): Ունեցանք շարականներէն ոմանց սքանչելի դաշնաւորումները: Իսկ ժողովրդական երաժշտութեան սեռին մէջ՝ իր կազմած հրաշագեղ շարերգները, suite-ները, որոնք անթառամ շնորհով մը պիտի ապրին երաժշտութեան գեղեցկագոյն ստեղծագործութեանց կարգին:

Փոքր երգերը, իրենց նիւթով ու երաժշտական բնաւորութեամբ ներկայացուցած յարմարութեանց համեմատ, Վարդապետը իրարու կապած է. երգի մանեակներ շինելով այսպէս: Անոնց մէջ ծանր ու դանդաղ կշռոյթով երգերուն հակադրուած են թեթեւ ու եռանդուն կշռոյթով եղանակները ու այդպէս ստեղծուած են երաժշտական փոքր գլուխ գործոցներ:

Ու մեր գմայլած հոգիներուն առջեւէն, աւելին՝ խորէն անցուց Վարդապետը, շարան շարան այդ երգերը որոնց մէջ բովանդակ կեանքն է հայ ժողովուրդին. ուրախութեամբ աշխատող, գմայլագին երագող, մաքրօրէն ու խորագին սիրող, անուշ թախծութեամբ մը կարօտցող, հրաշէկ հոգիով դիւցազնացող ու միշտ ու էապիւս հաւատացող հայ ժողովուրդին. աշխատանքի արի ցնծերգները, լուսնալուսային պարերգներն ու հարսներգները, միեւնոյն ատեն զգաստ ու խոովիչ այն սիրերգները, անհուն ու խոր կարօտերգներն ու ողբերգները, իսկապէս աստուա-

(Յ) Պիտի ունենայինք ուրիշ պատարագ մը եւս որ պիտի ըլլար, ինչպէս կ'ըսէր ինք, իր կրօնական երաժշտութեան կարեւորագոյն երկը, այս անգամ խոն խումբի համար գրուած հնգածայն, վեցածայն, եւ կառուցուած Օր. Էմի Արգարի կողմէ հրատարակուած Զուղայի Պատարագին մայր եղանակներուն վրայ գորս Վարդապետը կը նկատէր ամենէն հարազատօրէն հայկական պատարագի եղանակները. պիտի ունենայինք եթէ չպատահէր աղէտը: Այդ գործը կարեւոր մասերով գրուած էր արդէն, քայց զարմանալի է որ անկէ ոչ մէկ հետք գտնուած է իր թուղթերուն մէջ: Ո՛ւր անհետացած է արդեօք այդ գործը:

ծաթոխ տաղերն ու շարականները: Բովանդակ հոգեկան կեանքը հայ ժողովուրդին՝ երաժշտացած, ու այս անգամ Վարդապետին արուեստին մէջ վերստեղծուած, պայծառակերպուած, պայծառաձայնուած...:

Այդ արուեստով բերուած Հայ երաժշտութիւնը իր եղանակներու անսովոր հրնչողութեան նկարագրովը, իր ներկայացուցած ծայնաշարերուն եւ դաշնաւորման եղանակին արտադասական ու խիզախ ինքնատուութեամբը ու վերջապէս հոն երեւցող գրեւակերպին բազմեղանակային (polyphonique) եւ յատկանշօրէն նկարչագեղ բնութեամբը եւրոպական երաժշտական արդիական (moderniste) ճաշակին ուղղակի կը համապատասխանէր, ահա ինչու ընդունուեցաւ գմայլումով այդ շարժման վարպետներէն: Հայ երաժշտութիւնը դարերէ ու դարերէ եկած՝ Կոմիտաս Վարդապետին շնորհիւ, մէկ ոստումով՝ երաժշտական արուեստի բնաշրջութեան յառաջացած գիծին վրայ տեղ կը գտնէր:

Այս մեծ պատիւ մըն էր մեզ համար: Կը պարտինք զայն իրեն:

Խմբավարը

-----Եւրոպացիներու մօտ այս արդիւնքը ու մեր մէջ ալ Վարդապետին երաժշտութեան յարուցած անօրինակ խանդավառութիւնը չպիտի բացատրուէին սակայն, տակաւին, զործերու խմբագրութեան այս արուեստին յատկութիւններովը միայն: Որովհետեւ լաւագոյն երաժշտական երկերը գէշ կամ միջակ կերպով գործադրուած՝ չեն տար իրենց կարելիութեան մէջ եղող արդիւնքը: Մեծ բարեբախտութիւնը հոն էր նաեւ եւ տակաւին որ Վարդապետը իր երկերու գործադրութեան, Execution շին համար կը բերէր խումբերու ղեկավարութեան արտասովոր տաղանդ մը: Այս տեսակէտով իր ըրածը պարզապէս հրաշքի սահմաններուն կը մօտենար:

Վարդապետը կը հասնէր քաղաք մը, յաճախ հապճեպով կը ժողվէր երգիչներ, շատ անգամ երաժշտութեան որեւէ ուսումէ եւ մշակումէ գուրկ, ու այսպիսի տարրերէ մէկ երկու ամսուան, երբեմն քանի մը շաբթուան մէջ, ներկայանալի խումբ մը յառաջ կը բերէր, երգչական առաջնակարգ իրագործութիւններու կը հասնէր: Իր սորվեցնելու եւ վարելու կերպը գիտենք որ ապշեցուցիչ էր: Անոնք որ ծանօթ են նուազախումբի կամ երգչախումբի ղեկավարման արուեստին կամ նոյնիսկ միայն երաժշտական կեանքին, գիտեն թէ զործերու պարզապէս ճիշդ իրագործումը դեռ սկիզբն է ու տարրական բանը միայն ձեռք բերուելիք իրաւ արդիւնքին համար: Բուն խնդիրը՝ արտայայտութիւնը, երանգները ու աւելին՝ երաժշտական շունչը, ոգին ձեռք բերելուն մէջն է: Ու ստոր համար չեն բաւեր սովորական գիտութիւններ եւ վարպետութիւնը արուեստին: Ասոնցմեկ՝ ճիշդ բայց պաղ եղանակաւորումի մը ու բազմաձայնութեան մը միայն կարելի է հասնիլ: Երաժշտական բուն յափրշտակութիւնը ստանալու համար ասոնցմէ անդին գտնուող տեսակ մը մոգականութիւն անհրաժեշտ է որ քիչ վարիչներու միայն տրուած շնորհ մըն է: Ու այդ շնորհը ունէր բացառիկ աստիճանով մը Վարդապետը:

իր ձեռքերէն, որոնց մէջ՝ զանոնք աւելի ազատ պահելու համար, չէր առնել որեւէ զաւազանիկ, իր դէմքէն, իր ամբողջ անձէն անասելի ելեկտրականութիւն մը, ներուժ դիւթութիւն մը կ'երթար երգիչներուն, վեր հանելու անոնց հոգիները ու ձայները, ասոնցմէ ու ասոնցմով հաղորդուելու համար յետոյ ունկնդրող բազմութիւններուն ու երաժշտական հոգեկանութեան անդիմադրելի ու ամեհի ալիքներուն մէջ առնելու եւ բարձրացնելու համար զանոնք:

Ու այսպէս՝ մեծ խանդավառութիւնն էր յափշտակուած ամբոխներուն որ ծափահարութիւններուն մէջ ալ կ'որոտար ու չէր դադրեր: Երբեմն ցեղը բովանդակ արթնցած կ'ըլլար կարծես այդ պահերուն՝ այդ բազմութիւններուն մէջ: Մոռցուած ցեղը որ յանկարծ կ'ըլլար սրտերուն մէջ, կ'երգէր արիւնին մէջ ու արցունք կը դնէր անհամար աչքերուն:

Կոմիտասի երգչախումբը՝ կը հնչէր յաճախ իբրեւ արդիական նուագախումբ մը: Ծանօթ է պատմութիւնը Վարդապետին Աղեքսանդրիա տուած համերգին՝ ուր ներկայ իտալացի երաժշտագէտ մը ուզած էր բեմի խորքի վարագոյրին ետեւ անցնիլ տեսնելու համար թէ ի՞նչ գործիքներ թաքնուած են հոն որով երգչախումբը կը յաջողի նուագախումբի հնչականութիւն տալ: Հոն չկային լոկ տարբեր բարձրութեամբ ձայները սօբրանօներուն, ալթօներուն, թէնօրներուն ու պասերուն իրենց ինքնայատուկ դրոշմովը. ինչպէս կան անոնք եւրոպական սովորական երգչախումբերուն մէջ: Ըսի որ Վարդապետին խմբերգական գործերը երաժշտական նկարչագեղութիւն ստեղծելու մտահոգութեամբ գրուած են. այդ նկարչագեղութիւնը ձեռք կը բերուէր բարձրագոյն արուեստով մը խումբերու իրագործութիւններուն մէջ ձայներու արտաբերման տրուած զանազան երանգներով ու անոնց տարբեր բաղկացութիւններովը. ու ի վերջոյ այդ բոլորը թափանցող, թեւոզ զգացումովը. այդ բոլորին մէջ Վարդապետին անձէն եկած եւ մտած անդիմադրելի շունչովը:

Վարդապետը անկասկած մեր ժամանակի առաջնակարգ եւ բացառիկ երաժշտական ղեկավարներու զիծին վրայ կու գար:

Երգիչը

Մեծ եղաւ իբրեւ խմբավար, թերեւս անոր համար ալ էր այդ որ մեծագոյն եղաւ իբրեւ երգիչ: Իր համերգներուն երբ իր խումբերու երգերէն վերջ, կ'անցնէր դաշնամուրին առաջ՝ ու կ'երգէր ինքն իսկ՝ իր խումբերն ու խմբերգներն ալ կը մոռցնէր: - Յաճախ կը հարցնեն. «Բայց երբ կ'երգէր Վարդապետը ո՞վ կը խորհէր իր ձայնին»: «Լսած էք Կոմիտասը. գեղեցիկ էր շատ իր ձայնը. ի՞նչ պէս էր իր ձայնը»: Գեղեցիկ ձայներ շատ եղած են եւ կան, իրենինէն աւելի գեղեցիկներն ալ ապահովաբար շատ: Բայց իրեն պէս երգիչներ շատ քիչ եկած են աշխարհ ու պիտի գան: Անշուշտ սքանչելի կերպով կը բարձրանար, կը տարածուէր, կը տիրակալէր իր ձայնը անհատնում շունչէ մը բռնուած: Դարձեալ սքանչելի

որակով մը, դրոշմով մը օժտուած էր ան հակառակ երբեմն մթին ու մարած տար-
 րերու որ կը խառնուէին անոր, խոռվիչ բան մըն քի իրենք դնելով սակայն անոր
 այլապէս մաքուր ու պայծառ հնչականութեան մէջ: Բայց այս բոլորը կը չբանա-
 յին իր երգուածքին նկարագիրը կազմող արտայայտականութեան քով, իմաստի, ըզ-
 զացման երանգներուն, կիսաստուերներուն տրւչութիւնը ընելու ~~ինչու~~ իր կա-
 րողութեան քով: Ու ասոնք ալ տակաւին՝ այն անասելի ջերմեռանդ հոգեկանու-
 թեան քով որ իր երգուածքին ներյատուկ թոհչքը, վեհութիւնը, միսթիքը կը
 կազմէր: Չայն մը չէր այդ՝ հոգի մըն էր:

Հայ երաժշտական ոճի իսկութեան իր յայտնատեսութեանը օգնութեամբ, -յայտ-
 նատեսութիւն՝ որու մասին ըսի, -Կոմիտաս Վարդապետ գտաւ ու բերաւ մեզի հայ
 երգումի բուն ու հարազատ եղանակը: Ոճը: Ատիկա ալ իր անկորնչելի փառքերէն
 մին պիտի մնայ:

Մանաւանդ հայ կրօնական երգին տրւչութեան, այսպէս ըսենք՝ Մեսրոպեան Ո-
 ճը գտած էր: Մեսրոպեան կ'ընծմ որովհետեւ հայ կրօնական երգը տալու իր ոճը
 խորհրդաւոր հանգիտութիւն մը ունի Մեսրոպեան երկաթագիրներու, մեր ոսկեղարու
 մատենագիրներուն՝ մեր ճարտարապետութեան մեծ շրջանին կառուցուածքներու ոճին
 հետ. նոյն անսեթեւեթ, կորովի, պարզօրէն շնորհալի, սրտագին ու միսթիք իս-
 կութիւնը անոնց եւ իր երգուածքին մէջ: Այդ երգուածքին մէջ արեւելականու-
 թիւնը ի սպառ թօթափուած էր բայց եւ չէր իյնար եւրոպական կերպին մէջ, բուն
 իսկ հայ հոգիէն ու հաւատքէն եկած սրտառուչ ու աստուածաթոհչ բան մը ոգեղի-
 նութիւն կու տար անոր: Ուր էր թէ չկորսնցնէինք իր երգումի դարոցը, իրմով
 մէյ մը վերագտնուած այդ երգչական Ոճը:

Անձը

Այս ամէն գերազանցութիւններուն տակ հիմնական գաղնիք մը կը պահուի սա-
 կայն. եթէ իր մէջ տեսաբանը, յօրինողը, խմբավարը, երգիչը եղան այն ինչ որ
 եղան, պատճառն այն է որ այդ բոլորը տարբեր ձեւերու տակ նոյն եւ մի իսկու-
 թեան մը արտայայտութիւններն էին: Տեսաբանին թէ յօրինողին, խմբավարին թէ
 երգչին տակ միեւնոյն երաժշտական Անձը, միեւնոյն յայտնատեսական լոյսով
 լուսավառ մարդու էութիւնը կը ծառայաթէր: Կոմիտաս իր Անձը ամբողջ կը դնէր
 իր բոլոր ըրածներուն մէջ, իր խմբագրած յետին երգին եւ երգած յետին շեշտին
 մէջ. ու հանձարի լոյս մը կը կրէր ապահովաբար այդ Անձը իր մէջ: Ոչ անձնական
 հանձարի սակայն, եթէ կարելի է այսպէս ըսել, -ու հոս է էական յատկանիշը իր
 պարագային—այլ ցեղային հանձարի լոյս մը: Տեսակ մը անանձնական ~~նպատակ~~
~~թիւն~~ տեսողութիւն կ'առաջնորդէ զինքը իր գործին մէջ ու տեսակ մը անանձնակաւ
 կը լեցնէ զինքը ու իր ամբողջ գործունէութիւնը: Այդ է գաղտնիքը այն Տեսա-
 նողի ու Առաքեալի նկարագրին որուն գիծերով իր անձնաւորութեան պատկերը
 պիտի անցնի մեր պատմութեան: Ու ահա ինչու Արուեստագէտը եւ Հոգեւորականը

ծուլուած եղան միշտ իր էութեանը մէջ, միակտուր ծառագայթ մը կազմեցին հոն: Հոգին կը կրէր իր մէջ, ու իր մէջ հոգին՝ Սուրբ կը զգար, ատկէ՝ իր հաւատքը: Իր անձնաւորութեան շինուածքին ու բնաւորութեան տեսակէտով իբրեւ Ս. Սահակ-ներու եւ Ս. Մեսրոպներու զիծէն դէմք մը անցած եղաւ Հայ կեանքին մէջէն Հայ պատմութեան:

Իր էութեան Միութիւնը... բայց ինչ կամքով ու ծիգով բոնուած էր ան ու լարուած իր մարմնին մէջ: Մարմինը, նիւթը որուն օրէնքը ուրիշ է, պիտի օգտուէր աւաղ Մեծ Աղէտին իրեն տուած դժիւմ պատեհութենէն, կարծես իր վրէժը առնելու՝ անկէ իր վրայ եղած բոնութենէն: Ինչպէս ըրած էր ուրիշ մեծերու: Ու ապրեցաւ շնորհալի ու քարաբախտ Վարդապետը ծակատագիրներուն էն եղերականը, մեր ~~ու~~ աշխարհի աչքին առջեւ կենդանի մնալով հանդերձ, գարնուելով ծիշդ իր ամենէն թանկագին բանին մէջ՝ այդ Միութեանն իսկ մէջ: Ախար կոտրեց՝ փշուր փշուր, ~~բայց~~ այդ Միութիւնը, իբր գերագոյն հեզնանք սակայն զինքը պահելով դեռ տարիներ մեր առջեւ, իբրեւ ինքն իրեն անճանաչելի նիւթեղէն ստուերը:

Մահը կու գայ սրբել այսօր այդ ստուերը: Ու յաւիտենութիւնը իրեն կ'առնէ Կոմիտասը ու միաժամանակ մեզի կու տայ զայն իր բուն եղածին պէս: Իրեն կ'առնէ ու մեզի կու տայ իր Միութեանը մէջ վերահաստատած իսկական՝ Հոգի-Կոմիտասը, Հայ Երաժշտութեան Սուրբ-Կոմիտասը:

Գիտնանք մեզ համար կենդանի ու ներկայ պահել զինքը:

ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

"Կոմիտաս Վարդապետ, Անձր եւ Գործը"

Պուրբէջ, 22 Հոկտեմբեր 1936